ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2021 թվական N: 338-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքի բնակիչ Վարդան Իկիլիկյանի 2021 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Վարդան Շահենի Իկիլիկյանին՝ 2021 թվականի նոյեմբերի 11-ից մինչև Ախուրյան համայնքի ավագանու ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 5-րդ օրը, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դատական ակտի հրապարակման օրվան հաջորդող օրը:

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է